Պարոն/Տիկին Դ. Մուրադյան ին

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար Արթուր Սաֆարյանին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

«21» 04 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող անձանց անունը, ազգանունը՝**

- Դավիթ Մուրադյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ 2025 թվականի ապրիլի 14-ից 15-ը, Մոլդովայի Հանրապետություն, քաղաք Քիշնև:

4. Հրավիրող կողմը՝ էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA):

5. Գործուղման նպատակը՝ էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի էներգիայի անցման կոմիտեի հերթական հանդիպում:

6. Քննարկված թեմաները՝

Բացման խոսքով հանդես եկան էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի, Մոլդովայի Հանրապետության կարգավորող մարմնի ներկայացուցիչները՝ նշելով էներգետիկ անցման և վերականգնվող էներգիայի մասնաբաժնի ավելացման կարևորության մասին:

Հանդիպման սկզբում մասնակից երկրների ներկայացուցիչները ներկայացրին իրենց երկրներում էներգետիկ անցմանն առնչվող վերջին նորությունները և առկա խնդիրները:

Այնուհետև, ներկայացվեց անդամ երկրներում ածուխով աշխատող էլեկտրակայանների վերաբերյալ կազմված հաշվետվությունը, որում փորձ էր արվում ֆինանսական և տեխնիկական առումներով ներկայացնել դրանց ազդեցությունը էլեկտրաէներգետիկական համակարգի վրա, իսկ փակման դեպքում՝ դրա նաև սոցիալական ազդեցությունը: Հաշվի առնելով, որ Հայաստանում չկան ածուխով աշխատող կայաններ՝ հաշվետվության կազմման աշխատանքներին հայկական կողմը չեր մասնակցել:

Առաջարկվեց խմբագրել նաև դեռևս 2022 թվականին կազմված էլեկտրաշարժունակության (E-Mobility) վերաբերյալ հաշվետվությունը՝ հաշվի առնելով, որ էլեկտրոմոբիլների շուկան բավականին արագ զարգանում է և անհրաժեշտ է թարմացնել հաշվետվությունը:

Քննարկման հաջորդ թեման էներգախնայողությունն էր և էլեկտրական մարտկոցները: Նշվեց, որ վերականգնվող էներգետիկայի աճող մասնաբաժնին զուգընթաց ավելանում է նաև էներգախնայողության կարևորությունը, հաշվի առնելով և ֆինանսական, և տեխնիկական նպատակահարմարությունները: Այսպես, բոլոր անդամ երկրներում գործող էլեկտրական ցանցերը հարմարեցված չեն ամբողջությամբ վերականգնվող էներգիայի հաշվին գործելուն, և կամ անհրաժեշտ է կատարել մեծածավալ ներդրումներ և ամբողջապես վերափոխել էլեկտրական ցանցերը, կամ փորձել գործող ցանցերի ճկուն կառավարման շնորհիվ պահել գին-որակ հարաբերակցությունը: Նշվեց, որ մարտկոցների կիրառությունը չնայած գնալով ավելի է զարգանում, այդուհանդերձ, դրա կարգավորումը դեռևս լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունի:

Հանդիպման հաջորդ օրը ամբողջությամբ նվիրված էր անդամ երկների փորձին՝ վերականգնվող էներգիայի օգտագործմամբ աշխատող կայանների համար առկա թույլտվությունների ստացման համակարգերին: Հայկական կողմը սահիկաշարի միջոցով ներկայացրեց լիցենզիաների, շինարարական թույլտվությունների և համապատասխան փորձաքննությունների անցկացման ընթացակարգերը և առկա խնդիրները: Բոլոր մասնակից երկնրերի մոտ առկա էին միատեսակ խնդիրներ՝ ոչ հստակ ժամկետներ, թույլտվություն տրամադրող մարմինների մոտ վերականգնվող էներգետիկայի վերաբերյալ գիտելիքների պակաս, տարբերվող կարգավորումներ տարբեր ՏԻՄ մարմինների մոտ և այլն: Հայաստանի մասով ներկայացվեց նաև e-urban համակարգը, որի ներդրումով բավականին պարզեցել է շինարարական թույլտվությունների ստացման գործընթացը, և ներդրողների մոտ առաջացրել է վստահություն և գործընթացին հետևելու հնարավորություն:

7. Հանդիպումները, ելույթները՝ Հանդիպումներ են կայացել ասոցիացիայի անդամ հանդիսացող երկրների պատվիրակների հետ: Հանդիպման երկրորդ օրը հայկական կողմը ներկայացրել է վերականգնվող էներգայի օգտագործմամբ կայանների գործարկման համապատասխան թույլտվությունների ստացման ընթացակարգերը:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները՝ Հանդիպման ժամանակ որոշումներ է ընդունվել վերանայել 2022 թվականին կազմված հաշվետվությունը էլեկտրաշարժունակության վերաբերյալ:

Դավիթ Մուրադյան ---------- 21.IV.2025 ----------

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-
Ն որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 179-ԳՔ, 18.03.2025թ**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի սակագնային քաղաքականության վարչության զարգացման ծրագրերի բաժնի պետ՝ **Դավիթ Մուրադյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.**Քիշնև** /Մոլդովա /

5. Գործուղման ժամկետները **13.04.2025-16.04.2025 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Դավիթ Մուրադյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար- հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)	16,948	16.948
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	338,965	338.965
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	92	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	35,966	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ) **100%**	107,899	107,899
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	59	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	23,103	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	92,411	92.411
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		556,223	556,223

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 17. 04.2025թ.